

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Ընդունված է 03/08/2013

Բլոգերների միջազգային ասոցիացիա Բարձրագույն Խորհուրդի համաժողովի
ժամանակ Նախագահ Նազիր Եվլոյն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բլոգերների միջազգային ասոցիացիա

1. Ընդհանուր դրույթներ

1.1. "Բլոգերների միջազգային ասոցիացիան", այսուհետ՝ ԲՄԱ, հիմնված է բլոգերների նախաձեռնությամբ ստեղծված հասարակական միավորումների անդամության վրա, սույն Կանոնադրությամբ սահմանված ընդհանուր նպատակների իրականացման նպատակով, շահերի ընդհանրության հիման վրա:

1.2. ԲՄԱ-ն իրականացնում է իր գործունեությունը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիային, սույն Կանոնադրությանը համապատասխան և իր գործունեության մեջ առաջնորդվում է համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային սկզբունքներով, նորմերով և չափանիշներով:

1.3. ԲՄԱ-ի գործունեությունը հիմնվում է կամավորության, իրավահավասարության, ինքնակառավարման և օրինականության վրա:

1.4. ԲՄԱ-ն կարող է դաշինքների /ասոցիացիաների/ մեջ մտնել հասարակական միավորումների հետ:

1.5. ԲՄԱ-ն ներկայումս իրավաբանական անձ չէ և գործում է ընդհանուր ժողովի հիմնադրման պահից:

1.6. ԲՄԱ-ն ներկայումս չունի կնիք, նամականիշ, լոգո և ձևաթուղթ իր անվանմամբ, բայց իրավունք ունի ապագայում ցանկացած երկրում գրանցվել որպես իրավաբանական անձ:

1.7. ԲՄԱ-ի գործունեությունը հրապարակային է, իսկ նրա հիմնադիր և ծրագրային փաստաթղթերի մասին տեղեկատվությունը հասանելի է բոլորին:

1.8. ԲՄԱ-ի ստեղծման իմաստը այն է, որ ԲՄԱ-ն միավորում է մարդկության ինտելեկտուալ գեներացիան, հաղորդակցության միջոցով իհայտ է բերում հայեցակարգային գաղափարներ և դրական մտքեր, ինչը թույլ է տալիս բլոգերներին ազդեցություն ունենալ կենսագործունեության տարբեր ոլորտներում աշխարհի ցանկացած երկրում համամարդկային արժեքների և առաջնահերթությունների դիրքերից: ԲՄԱ-ն համակարգում, ադապտացնում, պահում և պաշտպանում է բոլոր նորարարությունները, այդպիսով ներառելով, որոնք օգտակար են Ասոցիացիայի գործունեության համար:

1.9. ԲՄԱ-ի գործունեության շրջանակն է համաշխարհային հարթությունը:

1.10. ԲՄԱ-ի մշտական գործող ղեկավար մարմինը գտնվում է Գերմանիայում

2. ԲՄԱ-ի նպատակները.

2.1. Ասոցիացիայի նպատակներն են. Աջակցել ԲՄԱ-ի անդամների տեղեկատվական-մշակութային մակարդակի բարձրացմանը: անցկացնել անկախ հասարակական փորձաքննություններ պետական և տեղական իշխանությունների մարմինների օրինագծերի և իրավական ակտերի, ինչպես նաև ցանկացած երկրում դրանց գործունեության ոլորտներում, ներկայացնել և պաշտպանել իր անդամների, ինչպես նաև ցանկացած երկրի պետական իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմիններում և հասարակական միավորումներում այլ քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը, աջակցել էլեկտրոնային կառավարման ստեղծման ոլորտում քաղաքականության գործնական իրականացմանը, իրականացնել միջազգային ասոցիացիաների մասին օրենքով նախատեսված բոլոր լիազորությունները, հանդես գալ նախաձեռնությամբ հասարակական կյանքի բոլոր հարցերում, առաջ քաշել առաջարկություններ ցանկացած երկրի պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում, մասնակցել ռեզոնանսային թեմաների քննարկմանը, որոնք հայտնվում են ՉԼՄ-ներում առաջարկությունների մշակման և առաջաքաշման նպատակով և վերաբերում են տարբեր PR ակցիաներ իզարգացմանը միջազգային, միջդավանական և սոցիումում այլ հարաբերությունների կարգավորման համար:

2.2. ԲՄԱ-ն ինքնուրույն է որոշում իր գործունեության ուղղությունը, մշակութային, գեղագիտական, տնտեսական, տեխնիկական և սոցիալական զարգացման ռազմավարությունը:

2.3. ԲՄԱ-ն իրավունք ունի ներկայացնել և պաշտպանել իր իրավունքները, իր անդամների, ինչպես նաև ցանկացած երկրի պետական իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմիններում և հասարակական միավորումներում այլ քաղաքացիների օրինական շահերը:

2.4. Ֆիզիկական և իրավաբանական անձիք կարող են մասնակցել ԲՄԱ-ի գործունեությանը ինչպես սեփականության անհատույց օգտագործման տրամադրման միջոցով, այնպես էլ ԲՄԱ-ին կազմակերպչական և այլ աջակցություն ցույց տալու միջոցով, ԲՄԱ-ի կանոնադրությանը հետևելու պայմանով:

2.5. Ասոցիացիան պարտավոր է հետևել միջազգային օրենսդրությանը, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին, որոնք վերաբերում են նրա գործունեության ոլորտին, ինչպես նաև նորմերին, որոնք սահմանված են նրա հիմնադիր փաստաթղթերում: գրանցման դեպքում ԲՄԱ-ն պարտավոր է ամեն տարի պետական գրանցման մասին որոշում ընդունող մարմինն տեղեկացնել իր գործունեության շարունակման մասին՝ նշելով մշտական գործող ղեկավար մարմնի գտնվելու վայրը, նրա անվանումը և ղեկավարների մասին տվյալները: թույլ տալ պետական գրանցման որոշումն ընդունող մարմնի ներկայացուցիչներին մասնակցելու

Ասոցիացիայի կողմից իրականացվող միջոցառումներին աջակցել պետական գրանցման որոշումն ընդունող մարմնի ներկայացուցիչներին ծանոթանալու ԲՄԱ-ի գործունեությանը՝ տեսնել ու դրա համապատասխանությունը կանոնադրությամբ հաստատված նպատակներին և օրինականությանը, ամեն տարի հրապարակել ԲՄԱ-ի գործունեության հաշվետվություն:

3. Ասոցիացիայի Ակտիվը, անդամության հարցերի կարգավորումը

3.1. Ասոցիացիայի Ակտիվում կարող են լինել ցանկացած երկրի գործունյա, դրական մտածող և տաղանդավոր բլոգերները, որոնց տարիքը բարձր է 18-ից, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները, որոնք համարվում են իրավաբանական անձ:

3.2. ԲՄԱ-ի Ակտիվում ընդունելությունը իրականացվում է ընդունվողի դիմումի հիման վրա ԲՄԱ-ի բարձրագույն խորհրդի անդամների մեծամասնության որոշմամբ: ԲՄԱ-ի անդամները ունեն հավասար իրավունքներ և կրում են տարբեր պարտականություններ:

3.3. Ակտիվի անդամները ունեն հավասար իրավունքներ. Ստանալ ԲՄԱ-ի գործունեության մասին տեղեկատվություն, ԲՄԱ-ի բարձրագույն խորհրդին և ԲՄԱ-ի պատասխանատու անձանց ներկայացնել ցանկացած առաջարկություն, որն ուղղված է Ասոցիացիայի գործունեության կատարելագործմանը, Մասնակցել ԲՄԱ-ի միջոցառումներին, Ընտրել և ընտրվել նրա ընտրովի մարմիններում:

3.4. Կրում են հավասար պարտավորություններ. Յետևել Ասոցիացիայի Կանոնադրությանը, Աջակցել նրա աշխատանքին, Չերժ մնալ ցանկացած գործողությունից /անգործությունից/, որը կարող է վնասհասցնել ԲՄԱ-ի գործունեությանը, Իրականացնել ԲՄԱ-ի ընգհանուր ժողովի և բարձրագույն խորհրդի որոշումները, որոնք ընդունվել են իրենց լիազորությունների շրջանակներում:

3.5. ԲՄԱ-ի անդամությունը կասեցնելու համար պետք է ներկայացնել դիմում ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդին, որն էլ ըստ դրա կընդունի համապատասխան որոշում:

3.6. ԲՄԱ-ի յուրաքանչյուր անդամ դուրս է գալիս Ասոցիացիայի կազմից դիմումը /որոշումը/ ներկայացնելու և դրան հետևող բանաձևի ընդունման պահից:

3.7. ԲՄԱ-ի անդամները կարող են հեռացվել Կանոնադրությունը խախտելու դեպքում / տեղեկատվական ցանցում ատելություն բորբոքող ծայրահեղական արտահայտությունների, անպարկեշտ բառապաշարի և այլնի առկայության հիման վրա/:

3.8. Ասոցիացիայի անդամների հեռացումը տեղի է ունենում ԲՄԱ-ի բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի որոշմամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

4. Ասոցիացիայի կառավարման կարգը

4.1. ԲՄԱ-յի բարձրագույն ղեկավար մարմինը ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի անդամների ընդհանուր ժողովն է: Բարձրագույն խորհրդի անդամների ընդհանուր ժողովը հրավիրվում է անհրաժեշտության դեպքում, սակայն ոչ պակաս, քան տարին երկու անգամ: Ընդհանուր ժողովի նիստերը իրավագործ են, եթե այնտեղ ներկա են ԲՄԱ-ի բարձրագույն խորհրդի անդամների կեսից ավելին: Որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ:

4.2. ԲՄԱ-ի բարձրագույն խորհրդի արտահերթ ընդհանուր ժողով կարող է լինել. ԲՄԱ-ի նախագահի որոշմամբ, Համակարգողի որոշմամբ, Բարձրագույն ժողովի անդամների 1/4-ի որոշմամբ, Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողովի որոշմամբ, Ասոցիացիայի Ակտիվի 1/4-ի որոշմամբ:

4.3. Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովը իրավասու է ընդունել որոշումներ ԲՄԱ-ի գործունեության ցանկացած հարցով:

4.4. ԲՄԱ-ի բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում. Հաստատել Կանոնադրությունը, մտցնել հավելումներ և փոփոխություններ նրա գրանցման ժամանակ՝ համաձայն նստավայր երկրի սահմանած օրինակարգի, Ընտրել նախագահին, համակարգողին, Բարձրագույն խորհրդին, ԲՄԱ-ի Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողովին և ժամանակից շուտ դադարեցնել նրանց լիազորությունները, բացառությամբ նախագահի լիազորությունների: Բարձրագույն խորհրդի կողմից Ասոցիացիայի նախագահի լիազորությունների դադարեցումը սկսվում է նախագահի կողմից դիմումը հանձնելուց հետո, Հաստատել տարեկան պլանը և տարեկան հաշվետվությունը, Ընդունել որոշումներ ցանկացած երկրում ԲՄԱ-ի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ բացելու մասին, Որոշել նրանց վերակազմավորման և վերացման հարցերը՝ լիկվիդացիոն հանձնաժողով ստեղծելով:

4.5. Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովը իրավասու է, եթե ներկա է Բարձրագույն խորհրդի անդամների կեսից ավելին: Որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ:

4.6. Բոլոր հարցերով որոշումներն ընդունվում են Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի նիստին ներկա գտնվողների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.7. Վերակազմավորման և վերացման, Ասոցիացիայի Կանոնադրությունում հավելումներ և փոփոխություններ մտցնելու մասին որոշումները ընդունվում են ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովին ներկա գտնվողների ընդհանուր ձայների 2/3-ով՝ ձայների որակական մեծամասնությամբ:

4.8. ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի գործունեության գործնական ղեկավարման համար ձայների պարզ մեծամասնությամբ ընտրվում է մշտապես գործող Ասոցիացիայի նախագահը:

4.9. Բարձրագույն խորհուրդը ընտրվում է ԲՄԱ-ի անդամների ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով, ակտիվիստների շրջանակից ընդհանուր ժողովում հաստատված քանակով:

4.10. ԲՄԱ-ի բարձրագույն ժողովը կարող է ժամկետն ավարտվելուց հետո վերընտրվել նոր ժամկետով: Նրա լիազորությունների ժամկետից շուտ դադարեցման հարցը կարող է քննարկման դրվել Ասոցիացիայի նախագահի կողմից և ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի կողմից ԲՄԱ-ի անդամների 1/3-ի պահանջով:

4.11. ԲՄԱ-ի Բարձրագույն խորհուրդը Չամակարգում և կազմակերպում է Ասոցիացիայի աշխատանքը, իրականացնում է վերահսկողությունը ըդհանուր ժողովի որոշումների կատարման վրա, Պատրաստում է հարցեր ԲՄԱ-ի ընդհանուր ժողովում քննարկելու համար, Ամեն տարի տեղեկացնում է գրանցող մարմնին ԲՄԱ-ի գործունեության շարունակման մասին՝ նշելով մշտական գործող ղեկավար մարմնի գտնվելու վայրը, նրա անվանումը և ղեկավարների մասին տվյալները: Իրականացնում է ԲՄԱ-ի Ակտիվի անդամների ընդունելությունը: Որոշում է այլ ցանկացած խնդիրներ, որոնք վերաբերում են բացառապես ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի իրավասությանը:

4.12. Որոշումներն ընդունվում են Ասոցիացիայի բարձրագույն խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, որոնք ներկա են նիստին:

4.13. ԲՄԱ-ի գործունեության անուղղակի ղեկավարման համար ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրվում է մշտապես գործող նախագահը:

4.14. ԲՄԱ-ի համակարգողի թեկնածությունը ներկայացվում է ԲՄԱ-ի նախագահի կողմից և նա ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

4.15. Ասոցիացիայի Չամակարգողը. Չաշվետու է ԲՄԱ-ի նախագահին և Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովին, պատասխանատու է ԲՄԱ-ի գործերի վիճակի համար և լիազորված է որոշել ԲՄԱ-ի գործունեության բոլոր հարցերը, որոնք չեն վերաբերում ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի բացարձակ իրավասությանը: Գործում է առանց հավատարմագրի և Ասոցիացիայի անունից ներկայացնում է նրան բոլոր հաստատություններում, կազմակերպություններում և միջոցառումներում ցանկացած երկրի տարածքում: Չամակարգում է ԲՄԱ-ի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեությունը: Իրականացնում է վերահսկողություն ԲՄԱ-ի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության վրա:

5. Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողով

5.1. Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողովի անդամներ կարող են դառնալ ԲՄԱ-ի անդամները ակտիվիստների շրջանակից, Ասոցիացիայի բարձրագույն խորհրդի յուրաքանչյուր անդամիներ կայացմամբ ձայների պարզ մեծամասնությամբ բաց քվերակության միջոցով:

5.2. Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողովի անդամների քանակը կախված է աշխարհի տարածաշրջանների թվից, որտեղ ապրում են Ասոցիացիայի անդամները՝ մեկը մեկին հարաբերակցությամբ:

5.3. ԲՄԱ-ի կանոնադրությանը համապատասխան գործունեության վրա վերահսկողությունը իրականացնում է Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողովը, որը

ընտրվում է Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի կողմից Ասոցիացիայի անդամների թվից երկու տարի ժամկետով:

5.4. Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողովը իրականացնում է ԲՄԱ-ի կանոնադրությանը համապատասխան գործունեության ստուգումը ամենաքիչը տարին մեկ անգամ:

5.5. Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողովը իրավունք ունի ԲՄԱ-ի պատասխանատու անձանցից պահանջել ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, հաշվետվությունները և անհատական բացատրությունները, այդ թվում գրավոր տեսքով:

5.6. Վերահսկիչ-վերաքննիչ հանձնաժողովը ներկայացնում է ստուգումների արդյունքները ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովին:

6. Կազմակերպության վերակազմավորման և վերացման կարգը

6.1. ԲՄԱ-ի վերակազմավորումը իրականացվում է ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի որոշմամբ, եթե այդ որոշման օգտին քվեարկել է անդամների առնվազն 2/3-ը:

6.2. ԲՄԱ-ն կարող է վերացվել կամ ԲՄԱ-ի Բարձրագույն խորհրդի ընդհանուր ժողովի որոշմամբ, եթե այդ որոշման օգտին քվեարկել է ԲՄԱ-ի ներկա անդամների առնվազն 2/3-ը, կամ դատարանի որոշմամբ: ԲՄԱ-ի վերացումը կամ վերակազմավորումը իրականացվում է գործող միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

6.3. ԲՄԱ-ի վերացումից հետո նրա կազմի վերաբերյալ փաստաթղթերը և տեղեկատվությունը պահպանման է տրվում Ասոցիացիայի գրանցման երկրի Պետական արխիվին օրենքով սահմանված կարգով

6.4. Վերացման մասին որոշումը ուղարկվում է Ասոցիացիան գրանցած մարմնին: